

\$-59

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆԻ ԱԻԵՏԻՍԻ ՖԻՇԵՆԿՐԵԱՆ

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ
1946-1971 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Է.00.01- «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտություններու թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախօսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՒԱՆ 2004

8

3 արդյունք

ԲԸ-Վ

ՀՀ ԳԱԱ Արևելազիտության ինստիտուտի հնչուի
Պ. Յուրբեանի անունի վարչական շենքի 16-04-2004
Ատենախօսութեան թեման հաստատուած է ԵՊՀ Հայոց
պատմութեան ամպիոնի մէջ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ- պատմական գիտութիւններու թեկնածու,
դոցենտ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Պ. Յ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՕՍՆԵՐ- պատմական գիտութիւններու դոկտոր,
փրոֆ. ԲԱՅԲՈՒՐԴԵԱՆ Վ. Ա.

պատմական գիտութիւններու թեկնածու,
դոցենտ ՍԵԼՔՈՆԵԱՆ Է. Լ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ- ՀՀ ԳԱԱ արևելազիտութեան ինստիտուտ.
արարագիտութեան բաժին

Ատենախօսութեան պաշտպանութիւնը պիտի կայանայ 2004թ. մայիսի
14-ին, ժ. 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի մէջ գործող 004 Հայոց
պատմութեան մասնագիտական խորհուրդի նիստին (Հասցէ՝ 375019,
Երևան, Մարշալ Բաղրամեան պող. 24գ.):

Ատենախօսութեան կարելի է ծանօթանալ ՀՀ ԳԱԱ Պատմութեան
ինստիտուտի գրադարանէն ներս:

Սեղմագիրը առաքուած է 2004թ. ապրիլի 14-ին:

Մասնագիտական խորհուրդի գիտական քարտուղար,
պատմական գիտութիւններու թեկնածու
Կ. Յան Կ. Յ. Խաչատրեան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հայկական գաղթավայրերու պատմութիւնը հայ ժողովուրդի
պատմութեան անբաժանելի մասն է: Հետեւաբար, ինչպէս ճիշդ
նկատած է հայկական գաղթավայրերու պատմութեան բազմալատակ
ուսումնասիրող Վ. Բ. Բարխուդարեանը, հայ ժողովուրդի ամբողջական
պատմութիւնը անհնարին է ներկայացնել առանց հայկական
գաղթավայրերու: Յայտնի է նաեւ, որ հայկական գաղթավայրերը
կարելոր դեր խաղացած են եւ այսօր ալ կը խաղան հիւրընկալ
երկիրներու կեանքի մէջ՝ տնտեսական, մշակութային, հասարակական
ու քաղաքական: Միեւնոյն ժամանակ հայկական գաղթավայրերը
իրենց կարելոր դերը ունեցած են եւ կը շարունակեն ունենալ
համահայկական մշակոյթի, հասարակական, քաղաքական մտքի
եւ այլ բնագաւառներու զարգացման գործին:

Չնայած իր այս կարելոր մշանակութեան, ցաւօք, հայկական
գաղթավայրերու պատմութեան համապարփակ գիտական ուսումնասիրութիւնը
հեռու է բաւարար համարուելէ: Կան գաղթավայրեր, որոնք առ այսօր
կարօտ են ուսումնասիրութեան: Գաղթավայրեր ալ կան, որոնք թէեւ
ուսումնասիրուած են եւ անոնց պատմութեան առանձին հարցերը
դարձած են հետազօտութեան առարկայ, սակայն մեծ թիւ կը
կազմեն այն հարցերը եւ ժամանակահատուածները, որոնք չեն
արժանացած աւելի խորը ուսումնասիրութեան: Գաղթավայրերու
այս վերջինի թիւին կը պատկանի Սուրիոյ հայկական գաղթավայրի
պատմութիւնը: Թէեւ Սուրիոյ հայկական գաղթավայրի
պատմութեան հարցերը վաղուց ուսումնասիրուած են եւ հայրենական
եւ սփիւռքահայ պատմաբաններու կողմէ, բայց, այնուհանդերձ,
այնպիսի կարելոր շրջան մըն է, ինչպիսին է 1946-էն առ
այսօր չէ դարձած առանձին ուսումնասիրութեան նիւթ:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ: Թեմայի արդիականութիւնը
կը յատկանշուի անով, որ 1946-1971թթ. Սուրիոյ հայկական համայնքը
առաւել ազդեցիկ դեր ունեցած է երկրի հասարակական-քաղաքական
կեանքի իրականութեան մէջ: Վայելած է ժողովրդականութիւն,
որոշակի վերաբերմունք արտայայտելով քաղաքական, տնտեսական,
հասարակական, մշակութային, բարոյական, գեղագիտական եւ
այլ բազմաթիւ հարցերու նկատմամբ: Բացի այդ, Սուրիա-խորհրդային
Միութիւն 1940-ական թուականներէն սկսեալ որդեգրած էին
տեխնիկա-տնտեսական համագործակցութիւն, օժանդակելու
Սուրիոյ նորանկախ պետութեան վերելքին:

1991թ., Հայաստանի անկախութենէն ետք, հայրենիք-սփիւռք
յարաբերութիւնները կը թեւակոխեն նոր փուլ: Հայաստանի
իր արտաքին յարաբերութիւններու մէջ սերտ համագործակցու-

¹ Վ. Բ. Բարխուդարեան, Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն,
Երևան, 1967, էջ 5:



թեամբ կը կապուի, տարբեր բնագաւառներով, նաեւ Արեւելքի արա-
բական երկիրներու հետ, ինչպէս ե՛լ Սուրիոյ: Սոյն աշխատութիւնը
կարելոր է նաեւ այն առումով, որ մշակութային ոլորտներուն եւ
կրթական համակարգէն ներս, այսօր մեծ է թիւը արաբ ուսանող-
ներու, որոնք մեծ մասամբ ուղարկուած են Սուրիոյ պետութեան
կողմէ, մասնագիտանալու առումով, ինչ որ մշակութային բնագա-
ւառէն ներս առաջընթաց քայլ կարելի է համարել Սուրիա-Հայաս-
տան մերձեցման:

Սոյն ատենախօսութիւնը ունի արդիական նշանակութիւն,
նաեւ այն իմաստով, որ այսօր ալ տասնեակ հազարաւոր հայեր
կ'ապրին Սուրիոյ մէջ եւ անոնց պատմութեան ուսումնասիրութիւնը
ունի ոչ միայն ճանաչողական եւ գիտական, այլեւ՝ քաղաքական
մեծ կարեւորութիւն եւ չափնէականութիւն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Հետազոտու-
թեան նպատակը եղած է պատմամշակութային եւ գիտական ուսում-
նասիրութեան ենթարկել Սուրիոյ հայկական համայնքի պատմու-
թեան 1946-1971-ի ինկած ժամանակահատուածը, արժէւորելով
ազգային կազմակերպութիւններու դերը հայապահպանման, ազգա-
յին ինքնագիտակցութեան ոգի սերմանելու, ծուլման վտանգէ գերծ
պահելու ազգաշահ եւ չափազանց պատասխանատու գործին:

Դրուած նպատակին համապատասխան ուսումնասիրու-
թեան խնդիրները հետեւեալ ձեւն ունին.

- Բնութագրել սուրիահայ համայնքի քաղաքական, տնտե-
սական եւ ընկերային կեանքի կառուցուածքը 1946-1971 ժամա-
նակահատուածին:

- Բնորոշել ազգային դպրոցի, մամուլի դերը եւ ընդհան-
րապէս մշակոյթի նշանակութիւնը համայնքի մէջ ազգային ինքնա-
գիտակցութեան պահպանման եւ զարգացման գործին:

- Բնորոշել կուսակցութիւններու, հասարակական կազմա-
կերպութիւններու, բարեսիրական հաստատութիւններու, հայրենա-
սիրական, մշակութային եւ մարզական միութիւններու դերը սուր-
իահայ համայնքի ազգային ակնդներու պատմական յաջորդակա-
նութեան պահպանման գործին:

- Պարզաբանել 1946-1948թթ. եւ վաթսուական թուական-
ներու հայրենադարձութեան պատմութեան հանգամանքները, ցոյց
տալ հայրենադարձներու ներդրումը մայր հայրենիքին ծաղկման եւ
բարգաւաճման գործին եւ առաւել տարբեր դիրքորոշումներ ներ-
գաղթի վերաբերեալ:

- Անդրադառնալ ժամանակաշրջանի հայ-արաբ դարաւոր
բարեկամութեան մանրամասներուն, մշակութային բնագաւառէն
ներս, համայնքի նորագոյն պատմութեան համար: Վեր հանել հայ-
րենիք-սփիւռք առընչութիւնները, Սուրիա-Խորհրդային Միութիւն,
ոչ միայն տնտեսական եւ դիւանագիտական, այլեւ՝ Սուրիա-
Խորհրդային Հայաստան մշակութային յարաբերութիւնները:

Սուրիահայերու գործելակերպի գաղափարական հիմքերն
ու անոնց ուսումնասիրութիւնը, զոր առ այսօր դուրս մնացած է
անաչառ հետազոտութիւններու տեսադաշտէն, կը բովանդակէ բազ-
մաթիւ հակասական հարցադրումներ, որոնք հնարաւոր չէ լուծել
միանգամայն, պատրաստի այս կամ այն մեկնաբանութեանց միջո-
ցաւ: Ինչպէս կուսակցութիւններու գործելակերպին ու տեսակէտ-
ներուն հետազոտողները, առհասարակ, մօտեցած են կտրուկ որա-
կումներով եւ միանշանակ եզրակացութիւններով, որոնց ուսումնա-
սիրութիւնը հետազոտողին կը պարտադրէ իրողութիւններուն
մօտենալ վերապահութեամբ եւ հաւասարակշռուած, հիմնաւոր
նախադրեալներով: Որպէս առաջին փորձ իր տեսակի մէջ սոյն
աշխատութիւնը այս պատճառով չի կրնար հաւակնիլ արդէն
պատրաստի եզրակացութիւններու:

Ինչպէս նշուեցաւ, անհնար է ստեղծել հայ ժողովուրդի
ամբողջական պատմութիւնը, առանց հայկական գաղթավայրերու,
սփիւռքի պատմութեան համապարփակ ուսումնասիրութեան: Հայ
գաղթավայրերու պատմութեան ուսումնասիրութիւնը կարելոր է
նաեւ հայ եւ միւս ժողովուրդներու փոխ-յարաբերութիւններու
պատմութեան ուսումնասիրութեան: Սփիւռքահայութիւնը կարելոր
ներդրում ունեցած է տուեալ երկիրներուն, ուր ստեղծուած են
գաղթավայրեր, քաղաքական, ընկերա-տնտեսական, հասարակա-
կան, կրթամշակութային կեանքի մէջ եւ իր հաւատարմութիւնը
դրսելորած է ու անմիջական մասնակցութիւնը բերած այդ երկիր-
ներու անկախացման համար մղուող ազգային-ազատագրական
պայքարին, որու ընթացքին հայերը վայելած են սէր, վստահութիւն
ու աջակցութիւն եւ ստացած լայն հնարաւորութիւններ՝ իրականա-
ցրելու տնտեսական, կրթամշակութային եւ հասարակական ազատ
գործունէութիւն, ի նպաստ գաղութներու զարգացման ու բարգա-
ւաճման եւ ամենակարելորդ՝ հայապահպանման:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՅԹԸ: Աշխատու-
թեան գիտական նորոյթը առաջին հերթին դիտարկուող հարցերու
պատմական, ակնդական եւ մշակութային առումներու ուսումնա-
սիրութիւնն է: Թէեւ որոշ հետազոտողներ ժամանակ առ ժամանակ
ընդհանուր բնոյթի աշխատութիւններու մէջ անդրադարձած են
տուեալ հարցին, այսուհանդերձ, մինչեւ այժմ, հայկական գաղթա-
վայրերու եւ յատկապէս Սուրիոյ հայկական համայնքի նորագոյն
պատմութեան նուիրուած գիտական եւ ամբողջական պատմական
ուսումնասիրութիւն գոյութիւն չունի: Առաջին անգամն է, որ մեր
հետազոտութեան շրջանակներուն մէջ փորձ կը կատարուի տալ
Սուրիոյ հայկական համայնքի շուրջ երեսնամեայ (1946-1971թթ.)
պատմութեան շարադրանքը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:
Ժամանակագրական առումով ատենախօսութիւնը հիմնականին մէջ
կ'ընդգրկէ սուրիահայ համայնքի 1946-1971 թուականներու ինկած

ժամանակաշրջանը: Ժամանակագրական նման ստորաբաժանումը պայմանավորում է հետեւեալ հանգամանքներով: Սուրիոյ հայկական համայնքի պատմութիւնը սկիզբէն մինչեւ 1946թ. լայնօրէն ուսումնասիրուած է պատմագրութեան մէջ: Այդ շրջանի վերաբերեալ լոյս տեսած են բազմաթիւ ուսումնասիրութիւններ: 1946 թուականներէն ետք ինկած ժամանակահատուածի վերաբերեալ որեւէ ընդհանրացնող ուսումնասիրութիւն կը բացակայի: Մենք նպատակայարմար համարեցինք ուսումնասիրութիւնը հասցնել մինչեւ 1971թ., քանզի այդ թուականէն ի վեր առ այսօր ինկած ժամանակաշրջանը, որ կը համընկնի Հաֆէզ Ասատի իշխանութեան ժամանակաշրջանի կրնայ դառնալ առանձին ուսումնասիրութեան առարկայ, որ միանգամայն կը տարբերուի 1946-1971թթ. պատմափուլի հիմնական խնդիրներէն:

ԹԵՄԱՅԻ ՀԵՏԱԶՉՕՏՄԱԼ ՄԵԹՈՏԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ: Թեման հետազոտուած է պատմաքննական եւ համեմատական մեթոտով: Բոլոր եզրակացութիւններն ու հետեւութիւնները կատարուած են առկայ փաստերէն բխող իրողութեան վրայ: Ատենախօսութիւնը շարադրուած է տուեալ խնդիրի հետ աղերս ունեցող հարցադրումներու եւ առկայ կարծիքներու քննական մեկնաբանութեամբ եւ փաստերու համեմատական-համադրական սկզբունքով: Աշխատութիւնը զերծ է կողմնակալ մօտեցումներէ եւ շարադրուած է անաչառութեամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ: Տուեալ աշխատութեան գիտա-գործնական նշանակութիւնը պայմանավորուած է հետազոտուող հարցերու արդիականութեան հանգամանքով: Ատենախօսութեան արդիւնքներն ու նիւթերը կրնան օգտագործել այն գիտական եւ կրթական հաստատութիւնները, որոնք կը զբաղին գաղթավայրերու պատմութեան խնդիրներով: Աշխատութեան մէջ առկայ փաստական նիւթը, անոր հիմնական դրոյթները, եզրակացութիւնները կրնան օժանդակել հայկական գաղթավայրերու պատմութեան նուիրուած յատուկ դասընթացքներու կազման, հայ ժողովուրդի պատմութեան ծրագրերու, տեղեկատուներու եւ ձեռնարկներու ստեղծման գործին:

Ատենախօսութեան շրջանառութեան մէջ դրուած նիւթերն ու եզրակացութիւնները կրնան նպաստել ընդհանրապէս հայ ժողովուրդի պատմութեան նորագոյն շրջանի հետազոտման եւ յատկապէս Սուրիոյ հայկական գաղթավայրի ուսումնասիրութեան:

Հաւակնութիւնը չունինք այս ատենախօսութիւնը ամբողջական սեպելու, սակայն, ան կրնայ կարելոր սկզբնաղբիւր հանդիսանալ յետագային Սուրիոյ հայկական համայնքի, նորագոյն շրջանի, պատմութեան ուսումնասիրութեան համար: Ի մտի ունենալով, որ Սուրիոյ հայկական համայնքի պատմութեան ուսումնասիրութիւնը, կրնայ հիմք հանդիսանալ, ընդհանրապէս, հայ ժողովուրդի

պատմութեան ուսումնասիրութեան, նաեւ, գաղթավայրերու ամբողջական պատմութեան ուսումնասիրութեան:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ: Ներկայացուող ատենախօսութիւնը քննարկուած եւ պաշտպանութեան երաշխաւորուած է երեւանի Պետական Համալսարանի Հայոց Պատմութեան Ամպիոնի նիստին: Ատենախօսութեան հիմնական դրոյթներն ու եզրակացութիւնը լուսաբանուած են հեղինակի կողմէ հրատարակուած գիտական յօդուածներու մէջ:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Թեմայի ուսումնասիրութեան համար աղբիւրագիտական հիմք կը ծառայեն Հայաստանի ազգային արխիւի (յետայսու՝ ՀԱԱ)² փաստաթուղթերը, յատկապէս Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի, Արտաքին գործոց նախարարութեան եւ Ամերիկահայ ազգային խորհուրդի ֆոնտերը: Օգտագործուած փաստաթուղթերուն մէջ (առաջինի եւ երկրորդի) զգալի տեղ կը գրաւեն Սուրիոյ եւ առաւելապէս Հալէպի հայկական գաղութի վերաբերեալ տեղեկանքներ, տեղացի պետական այրերու եւ գաղութի որոշ հայ անձերու հետ կատարուած զրոյցի գրառումներ, ուշագրաւ տեղեկութիւններ 1946-1948թթ. եւ 1964-1966թթ. սուրիահայերու հայրենադարձութեան կազմակերպչական աշխատանքներու վերաբերեալ, վիճակագրական ցուցակներ եւ Սուրիոյ պետական այրերու դիրքորոշումն ու վերաբերմունքը հայրենադարձուողներու նկատմամբ. ընդ որում արխիւային զգալի վաւերագրեր առաջին անգամ մեր կողմէ կը դրուին շրջանառութեան մէջ: Վերոյիշեալ ֆոնտերու տեղեկանքներու մէջ ուշագրաւ նիւթեր կան տեղի համայնքի մշակութային եւ հայրենակցական միութիւններու, տնտեսական կեանքի, քաղաքական կազմակերպութիւններու եւ այլ հարցերու վերաբերեալ:

Օգտագործուած են նաեւ Բերիոյ (Հալէպի) թեմի ազգային առաջնորդարանի արխիւի (յետայսու՝ ԲԹ ԱԱԱ)³ քաղաքական ժողովի եւ ուսումնական խորհուրդի տոմարները (դարան), ինչպէս նաեւ Գամիշլիի փոխ-առաջնորդական առաջին տոմարը⁴: Առաջինի

² Հայաստանի ազգային արխիւ (յետայսու՝ ՀԱԱ) ֆոնտ 875, ցուցակ 1, գործ 31; գ. 32; գ. 6: Ֆ. 875, գ. 2, գ. 575; գ. 578; գ. 585; գ. 592; գ. 201; գ. 586: Ֆ. 875, գ. 16, գ. 170:

Ֆ. 326, գ. 1, գ. 104; գ. 147; գ. 149; գ. 196; գ. 283; գ. 342; գ. 441: Ֆ. 326, գ. 2, գ. 75:

Ֆ. 426, գ. 1, գ. 3956; գ. 3786:

Ֆ. 439, գ. 3, գ. 78; գ. 79: Փաստաթուղթերը քարգմանուած են ռուսերէնէ: Թարգմանած են պատմական գիտութիւններու քեկնածու՝ Ռ. Սահակեանը, Յ. Գինոյեանը (Երեւան) եւ Մ. Չավուշեանը (Հալէպ):

³ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիւ (յետայսու՝ ԲԹ ԱԱԱ) Դարան Բ., գ. 55; գ. 62: Դարան Դ., գ. 25; գ. 69: Դարան Զ., գ. 41:

⁴ Գամիշլիի փոխ-առաջնորդական ատենագրութեան Ա. տոմար, Բերիոյ թեմի առաջնորդարանի դիւան:

մէջ տեղադրուած փաստաթուղթերն ու տեղեկագրերը հարուստ միւթ կը տրամադրեն ուսումնասիրողին, կապուած կրթութեան համակարգի, նախարարութեան կողմէ առաքուած հրամանագրերու, հայրենու տեղաբաշխումի (վիճակագրական ցուցակներ) եւ մասամբ գաղութի վիճակին: Ցաւօք սրտի, բացի Հայաստանի ազգային արխիւէն, միւս երկուքը կարգաւորուած վիճակի մէջ չեն եղած: Բաւարարուած են միայն մշէլ՝ ԲԹ ԱԱԱ, դարանն ու թղթածրարի թուանշանը, որպէս գործ: Նոյնիսկ թերթերու կարգաւորման ու թուարկման հնարաւորութիւն չեն ստեղծուած այնտեղ: Բայց եւ այնպէս կարելոր սկզբնաղբիւր է խնդրոյ աշխատութեան շարադրման համար:

Սկզբնաղբիւրի դերով հանդէս կու գայ, Հալէպի Հայոց երբեմնի հոգեւոր առաջնորդ՝ Արտաւազդ արք. Սիւրմէեանի «Պատմութիւն Հալէպի Հայոց» երահատոր աշխատութիւնը, ուր հեղինակը առաջինի եւ երրորդի մէջ՝ սոսկ պատմական տեղեկութիւններով կը ներկայացնէ Սուրիոյ, վաղ ժամանակներէն մինչեւ Ի. դարու քառասունական թուականներու, մէջ ապաստանող ազգաբնակչութեան, պատմա-մշակութային վայրերու, հնադարեան պետութիւններու եւ պարբերաբար հայոց՝ Հայաստանէն արտագաղթի վերաբերեալ հարցեր: Ոչ պակաս արժէքաւոր աղբիւր է նաեւ Ռ. Ճեպեճեանի «Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունէութիւն» աշխատութիւնը⁶, ուր հեղինակը ակնատեսի վկայութեամբ արժէքաւոր տեղեկութիւններ կը փոխանցէ քննարկուող ժամանակաշրջանի Սուրիոյ հայ-արաբ (առաւելաբար հայութեան) եւ հայրենիք-սփիւռք առընչութիւններու մասին:

Արխիւային միւթերէն բացի, սոյն ուսումնասիրութեան համար կարելոր աղբիւրագիտական հիմք հանդիսացած են «Գեղարդ» սուրիահայ տարեգիրքի վեց հատորները՝ Ա.⁷, Բ.⁸, Գ.⁹, Դ.¹⁰, Ե.¹¹, Զ.¹², եւ համանուն տարեգիրքի արաբերէն տարբերակը (Զ. հատոր)¹³, նուրիւած հայ-արաբ դարաւոր բարեկամութեան: Այնտեղ, սուրիահայ եւ յատկապէս հալէպահայ գաղութի քաղաքական,

⁵ Ա. արք. Սիւրմէեան, Պատմութիւն Հալէպի Հայոց, Կ. Ա., Սուրիա, Հալէպ, 1940: Տե՛ս նաեւ նոյնի՝ «Պատմութիւն Հալէպի Հայոց», Կ. Գ., Փարիզ, 1950:

⁶ Ռ. Ճեպեճեան, Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունէութիւն, Հալէպ, 1999:

⁷ «Գեղարդ», Սուրիահայ տարեգիրք, Ա. տարի, Հալէպ, 1975:

⁸ Նոյնը, Բ. տարի, Հալէպ, 1976-1978:

⁹ Նոյնը, Գ. տարի, Հալէպ, 1985:

¹⁰ Նոյնը, Դ. տարի, Հալէպ, 1991:

¹¹ Նոյնը, Ե. տարի, Հալէպ, 1996:

¹² Նոյնը, Զ. տարի, Հալէպ, 2000:

¹³ Կիցարտ, الأشرطة السنوية - الكتاب السادس، حلب، 2002.

«Գեղարդ», արաբերէն տարբերակը՝ «Էլ մաշրա էլ սամաուիէ, էլ գիզապ էլ սատես», Հալէպ, 2002:

տնտեսական, ընկերային եւ առաւել մշակութային կեանքի վերաբերեալ ուշագրաւ միւթեր կը տրամադրուին:

Այս առումով աղբիւրագիտական հիմք կը հանդիսանայ մա- եւ պարբերական մամուլը, այդ թուին «Եփրատ», «Արեւելք», «Սուրիա», «Նայիրի», «Արեւելք Մարգաշխարի», «Ռեպի Երկիր», «Երկիր», «Նոր Մարաշ», «Սուրիահայ Տարեգիրք», «Տաթել», «Ծի- լեր», «Հայկազն», «Պարբերաթերթ», «Օշական», «Գանձասար» (բացառիկ), «Գանձասար» (երկշաբաթաթերթ), «Գանձասար» (շա- բաթաթերթ), «Նոր Ապրիլ»: Ծառայութիւն մատուցած են նաեւ սփիւռքի եւ հայրենի մամուլի օրկաններէն՝ «Ազդակ», «Ազդակ Շա- բաթաթերթ», «Ազդակ» (բացառիկ), «Զարթօնք», «Հասկ», «Հայ- կազեան Հայագիտական Հանդէս», «Մշակոյթ», «Հայաստանի Կոչ- նակ», «Բագին», «Սիոն», «Լրաբեր» հասարակական գիտութիւն- ների, «Սովետական Հայաստան» (հանդէս), «Սովետական Հայաս- տան» (օրաթերթ), «Էջմիածին», «Պատմա-բանասիրական հանդէս» եւ այլն:

Թեմայի ուսումնասիրութիւնը կատարուած է առանձնապէս արաբական գրականութեան, մասամբ տեղական մամուլի, օրուան բարձրաստիճան արաբ պաշտօնեաններու կարծիքներու եւ գնահա- տականներու լոյսի ներքոյ: Աղբիւրագիտական հիմք կրնան հանդի- սանալ, յատկապէս, տոքթ. Ա. Քէշիշեանի¹⁴, էլ ուսթագ էլ Թապիպ Թահ Ասուակ էլ Քայալիի¹⁵ եւ Սուհամէտ Հիլալ Տամախիի¹⁶ աշխատութիւնները թեմայի վերաբարեալ:

Բացի յիշուած արաբերէն գրականութենէ, օգտակար եղած են՝ սուրիական պաշտօնաթերթ «Էլ ճարիտա էլ-ռասմիէ» (քանի մը թիւ) եւ տեղական պարբերական մամուլը՝ «Էլ Նասըր» «Յաղթա- նակ», «Թիշրին», «Էլ ճամահիր», «Էլ Պասս», «Էլ Նագիր» եւ «Էլ Թագատտոմ» թերթերն ու «Էլ Ղատ» պարբերականը: Նշենք, որ չյիշատակուած անուններուն կարելի է ծանօթանալ մատենագի- տութեան մէջ:

Կարելորենք մշէլ, թէ մամուլի էջերու եւ տարեգիրքերու մէջ եղած տեղեկութիւնները մեզի չեն կրնար բաւարարել քանի մը պատճառներով: Նախ պէտք է ըսել, ատոնք միշտ չէ, որ վաւերական

¹⁴ د.الكسندر كشيبيان، صفحات و ثانقيه من جريده «التقدم» الحلبيه عن الاحوال الارمنييه و العربييه في الدوله العثمانييه و البلاد الشاميه، حلب، 1996.

(Ա. Քէշիշեան, Սաֆահադ ուսասիլիէ մին ճարիտէթ «Էլ Թագատտոմ» էլիալապիէ ան էլահուալ էլ արմանիէ ուս էլարապիէ ֆի էլտոսուա էլօսմանիէ ուս էլպիլաւ էլշամիէ, Հալէպ, 1996):

¹⁵ - الاستاذ الطبيب طه اسواق الكيالي، تاريخ الطب و الاطباء في حلب و اطباء الاسنان والصيادله، الجزء الاول، حلب، 1999.

(Թ. Ասուակ Քայալի, Թարիխ էլրրպ ուս էլարապա ֆի Հալապ ուս արապա էլլասման ուս էլլասաուիլա, էլճիզը էլլաուալ, Հալապ, 1999):

¹⁶ محمد هلال دملخي، مسرح حلب في مئة عام، حلب، 2000.

(Մ. Հիլալ Տամախի, Մարսահ Հալապ ֆի միէթ աամ, Հալէպ, 2000):

են եւ իրենց վրայ յաճախ կը կրեն պահպանողական մտայնութեան կնիք: Նիւթերը, հեղինակներու հետաքրքրութեան շրջանակները, սովորաբար նեղ են եւ ամբողջական գաղափար չեն տար տուեալ գաղութի կեանքի բոլոր կողմերու մասին: Գաղութներու պառակտուածութիւնը, ներքին պայքարն ու հակամարտութիւնները զանազան կուսակցութիւններու ու խմբաւորումներու միջեւ անխուսաբելիօրէն իրենց կնիքն կը դնեն այդ նիւթերու վրայ, որոնք յաճախ հեռու են գիտական մշակակութիւն ունենալէ:

Մեր կողմէ առաւել օգտագործուած են նաեւ հրատարակուած պատմական տեղեկագրեր, մենագրութիւններ եւ գիտական յօդուածներ¹⁷:

Մեր թեմայի վերաբերեալ գոյութիւն ունեցած գրականութեան մէջ կ'առանձնանան, յատկապէս, Գ. Խ. Թոփուզեանի ուսումնասիրութիւնները¹⁸: Գ. Թոփուզեան «Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթածախների պատմութիւն (1841-1946)» աշխատութեան մէջ, արխիւային հարուստ փաստաթուղթերու վրայ կրցած է տալ Սուրիոյ եւ Լիբանանի հայկական համայնքի պատմական, քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային բնագաւառներու պատմութեան շարադրութեամբ ներկայացուցած է, նաեւ, արաբ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի մանրամասները, անդրադառնալով միաժամանակ Սուրիոյ հայկական գաղթավայրի ընկերա-տնտեսական, հասարակական եւ մշակութային պատմութեան շատ հարցերուն: Զուտ պատմական բնոյթ կրել է անկախ Գ. Թոփուզեան փորձած է որոշ հարցեր դնել քննական լուսարձակի տակ՝ վերլուծելով գանոնք խորհրդայնամետ մօտեցումով: Բայց եւ այնպէս կարեւոր սկզբնաղբիւր է 1841-1946թթ. Սուրիոյ եւ Լիբանանի հայկական գաղթավայրերու ուսումնասիրութեան:

Հայրենադարձութիւնը, այդ թուին, նաեւ, սուրիահայերու հայրենադարձութեան հարցերը քննարկուած են Գ. Մելիքսեթեանի մենագրութեան¹⁹ մէջ, զոր նոյնպէս շարադրուած է արխիւային հարուստ փաստաթուղթերու եւ մամուլի նիւթերու վրայ: Աշխատու-

¹⁷ «Մերձուր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հ. Գ., Երեւան, 1967; հ. Զ., Երեւան, 1974; հ. Թ., Երեւան, 1978: Նաեւ՝ «Լրաբեր», հասարակական գիտութիւնների, Երեւան, 1967, թի 9; Երեւան, 1983, թի 7, թի 8; Երեւան, 1990, թի 10, եւ այլն:

¹⁸ Զ. Խ. Թոփուզեան, Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթածախների պատմութիւն (1841-1946), Երեւան, 1986: Տե՛ս նաեւ նոյնի՝ «Հայերի մասնակցութիւնը Սիրիայի եւ Լիբանանի ազգային-ազատագրական եւ դեմոկրատական շարժումներին», Երեւան, 1968: Նաեւ՝ «Սիրիա-Միջագետք, Լիբանան» բաժինը «Հայ գաղթաշխարհի պատմութեան» եռհատորեակի հ. Բ., Երեւան, 2003, էջ 318-342:

¹⁹ Զ. Ու. Մելիքսեթեան, Հայրենիք-սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը (1920-1980թթ.), Երեւան, 1985:

թեան մէջ Մելիքսեթեան կը լուսաբանէ սփիւռքի յառաջացման պատճառները Ա. աշխարհամարտէն ետք ինկած տարիներուն: Հարուստ փաստերով կը լուսաբանէ Ազգերու լիգայի մէջ հայ գաղթականութեան հարցի քննարկումը եւ մեծ հայրենասէր ու առաջադէմ գործիչ Ֆ. Նանսէնի յանձնաժողովի գործունէութիւնը եւ յետպատերազմեան շրջանի հարցերը: Կը վերլուծէ այն պատճառներն ու հանգամանքները, որոնցմով պայմանաւորուած էր հայրենադարձութեան այդպիսի անախադէպ վերելքը: Մելիքսեթեան մանրամասնօրէն կը ներկայացնէ հայրենադարձութեան կազմակերպման ու նախապատրաստական այն բոլոր աշխատանքները, որոնք ձեռնարկեցին այս կամ այն որոշումները իրականացնելու: Քննութեան առարկայ կը դարձնէ հայրենադարձութեան նկատմամբ սփիւռքահայ ո՛չ միայն կուսակցութիւններու, այլեւ՝ հասարակական կազմակերպութիւններու վերաբերմունքը:

Յետպատերազմեան շրջանի սփիւռքահայ կուսակցութիւններու վարած քաղաքականութեան եւ գաղափարախօսութեան հիմնական հարցերու վերաբերեալ արժէքաւոր կը համարենք Լ. Խուրշուդեանի²⁰ եւ Գ. Սիմոնեանի²¹ մենագրութիւնները: Լ. Խուրշուդեան համառօտ ակնարկով կ'անդրադառնայ կուսակցութիւններու պատմական անցեալին, գաղափարախօսութեան ու մանրամասն կը վերլուծէ դաշնակցութեան, հնչակ եւ ռամկավար ազատական կուսակցութիւններու յետպատերազմեան ժամանակաշրջանի քաղաքականութիւնը: Զգալի տեղ կը յատկացնէ դաշնակցութեան վարած քաղաքականութեան մերկացումին՝ օգտագործելով հնչակ եւ ռամկավար կուսակցութիւններու կողմէ գրուած նիւթերը՝ դաշնակցութեան դէմ ուղղուած: Բացի այդ, Խուրշուդեան օգտագործելով սփիւռքի դաշնակցականներու օրկաններու տեսութիւնները, կը փորձէ քննադատաբար մօտենալ տեղադրուած հարցերուն: Օգտուած է նաեւ, արաբական առաջդիմական մամուլի տեսութիւններէն հարցերու վերաբերեալ: Սփիւռքահայութեան, իւրաքանչիւրի ներկրէն ներս, տիրող քաղաքական իրադրութեան եւ ընկերային վիճակի մասին, ոչ պակաս արժէքաւոր աղբիւր է Գ. Սիմոնեանի աշխատութիւնը: Շարադրանքը կատարուած է ոչ միայն, մեծ մասամբ, հայերէն եւ օտար գրականութեան հիման վրայ, այլեւ՝ փաստաթուղթերու, վաւերագրերու, սփիւռքեան մամուլի եւ արխիւային նիւթերու: Աշխատութեան մէջ հեղինակը անդրադարձած է գաղթաշխարհի հայութեան դիմագրաւած դժուարութիւններուն, անոնց ապաստանած երկիրներու քաղաքական վերիվայրումներուն, եւ

²⁰ Լ. Ա. Խուրշուդեան, Սփիւռքահայ կուսակցութիւնները ժամանակակից Էապոյում, Երեւան, 1964:

²¹ Զ. Սիմոնեան, Սփիւռքահայութիւնը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երեւան, 1968:

օտար պետություններու որդեգրած քաղաքականութեան: Երրորդ բաժինը ամբողջութեամբ նուիրած է «ժողովուրդներու ազգային-ազատագրական շարժումներու պաշտպանութեան դիրքերում» հարցին, ուր հեղինակը մանրամասնօրէն կը ներկայացնէ արաբական Արեւելքէն ներս տիրող անբարենպաստ վիճակը, որ իր խոր արմատները պիտի ձգէր վերապրող հայու ամբողջ էութեան եւ որդեգրուած տարբեր քաղաքական դիրքորոշումները, պառակտումի ալիքներ բարձրացնելով: պիտի ստիպէին: հայուն արտագաղթի, աւելի յարմար վայրեր որոնելու: Ազգային կուսակցութիւններու դիրքորոշումին անդրադառնալով, հեղինակը առաւելաբար ծանրացած է ԳՅԴ-ի գործունէութեան, իր բացասական կեցուածքով. թէւ երբեմն փորձած է ԳՅԴ-ի օրկաններէն մէջքերու մտերմ կատարել, բայց եւ այնպէս՝ իր քննադատական վերլուծումով:

Լշեմք, որ մեր հիմնական նպատակը սուրիահայ կուսակցութիւններու փլիխոփայական հայացքները առանձին-առանձին վերլուծելը չէ, այլ՝ անոնց դերը գաղութահայ կեանքէն ներս եւ հայապահպանման գործընթացի ոլորտներուն: Չքննադատել անոնց գործունէութիւնը, մղուած այս կամ այն կուսակցականի գործելակերպին պատճառաւ, որովհետեւ հակառակ տիրող վերիվայրումներուն, սփիւռքը առ այսօր պահողը եղած են կեղեցիկ ու կուսակցութիւնները իրենց կազմակերպութիւններով:

Սփիւռքահայութեան, ի մասնաւորի սուրիահայութեան, ընկերա-քաղաքական պատմութեան հետ ուղղակի կ'առնչուի 1962թ. լոյս տեսած, Ս. Գասպարեանի «Սփիւռքահայ գաղթօճախներն այսօր» գիրքը²², որ սփիւռքի քննարկուող ժամանակաշրջանի իրավիճակը լուսաբանող հանրամատչելի ուղեցոյց կարելի է համարել: Այնտեղ արժէքաւոր տեղեկութիւններ կան, նաեւ Սուրիոյ քաղաքական ու հասարակական կազմակերպութիւններու, բարեգործականի, հայրենակցական միութիւններու, մամուլի, դպրոցներու եւ մշակութային կեանքի մասին (համառօտ): Իմ կարծիքով, հեղինակը միւս խորհրդային պատմաբաններու նման, խօսելով կուսակցութեանց գործունէութեան մասին, հասարակական կեանքի բազմազան բնագաւառներէն ներս, ճիշդ գնահատականներու չէ յանգած: Սփիւռքահայութեան պատմութեան տարբեր կողմերու լուսաբանութիւնը հանդէս եկած է Կ. Դալլաքեանի երկու աշխատութիւններու մէջ²³: Արժէքաւոր ուսումնասիրութիւն է նաեւ Կ. Դալլաքեանի «Ռամկավար ազատական կուսակցութեան պատմութիւն» մենագրութիւնը²⁴, ուր հեղինակը իր տրամադրութեան տակ գտնուող արխիւային հարուստ փաստաթուղթերու եւ կուսակցութեան ընդհանուր ժողովներու նիստերէն քաղուած նիւթերու վրայ շարադրած է իր աշխատանքը:

Խորհրդահայ պատմաբանները առանձին հետաքրքրութեամբ զբաղած են ժողովուրդներու ազգային-ազատագրական պայքարի ուղիներով եւ սփիւռքահայութեան մասնակցութեան հարցով, որոնց շնորհիւ նշուած հարցերը համեմատաբար արտացոլուած ու լուսաբանուած են շարք մը աշխատութիւններու մէջ: Յիշատակութեան արժանի են՝ Ջ. Կիրակոսեան եւ Յ. Յակոբեանի գրքոյկը²⁵ եւ Ն. Յովհաննիսեանի մենագրութիւնը²⁶: Յեղինակները հայկական, արաբական, օտարերկրեայ եւ այլ աղբիւրներու հիման վրայ, տուած են յետպատերազմեան ժամանակաշրջանի արաբական Արեւելքի, մասնաւորապէս Լիբանանի եւ Սուրիոյ ժողովուրդներու հակազաղութային, ազգային-ազատագրական շարժումներու ընթացքը, նաեւ հայերու մասնակցութիւնը արաբ ժողովուրդի երկրի անկախութեան համար մղուած պայքարին: Յեղինակները պայքարի լոյսին տակ բացայայտած են կուսակցութիւններու դիրքերը ազատագրական շարժումի վերաբերեալ: Սակայն շեշտուած է միակողմանի վերլուծութեամբ փորձած են բացայայտել դաշնակցութեան «իսկական էութիւնը», որպէս արաբներու ազատագրական շարժման դէմ, թշնամական իր կեցուածքով, շատ լաւ իմանալով, որ հայը իր հիւրընկալուած երկիրներու մէջ չէր կրնար նման քայլերու դիմել: Կարելորեմք մշել, որ հայերու ոչ միասնական ըլլալը կախուած էր երկրէն ներս տիրող ոչ բարենպաստ իրավիճակի: Գաղութակալութեան դէմ մղուած պայքարի ընթացքին, արաբները աւելի ուշ համոզուեցան, որ պայքարի յաջողութիւնը կախուած էր արաբական ժողովուրդներու միասնութենէն եւ այնուհետեւ միասնութեան գաղափարը առաւել սկսաւ տիրապետել «Արաբական Արեւելքի ժողովուրդներու գիտակցութեան»: Մեր ուսումնասիրութեան համար յատկապէս արժէքաւոր եղած են այս հեղինակներու վերլուծութիւնները գաղութի պատմութեան վերաբերեալ:

Սփիւռքի մէջ հայ ազգային դպրոցի կազմակերպման եւ գործունէութեան առաւել վառ օրինակը կը ցուցադրէր նաեւ Սուրիոյ հայ համայնքը: Այս առումով կարելոր աշխատութիւն կարելի է համարել Յ. Չոլաքեանի «Յուշանատեան Քարէն Եփփէ Ազգային

²² Ս. Գասպարեան, Սփիւռքահայ գաղթօճախներն այսօր, Երեւան, 1962:

²³ Կ. Լ. Դալլաքեան, Սփիւռքահայ առաջդիմական կազմակերպութիւնները խաղաղութեան եւ դեմոկրատիայի համար մղուող պայքարում, Երեւան, 1968: Տե՛ս նաեւ նոյնի՝ «Հայ սփիւռքի պատմութիւն», Երեւան, 1999:

²⁴ Կ. Լ. Դալլաքեան, Ռամկավար ազատական կուսակցութեան պատմութիւն (1921-1940), գիրք առաջին, Երեւան, 1999:

²⁵ Ջ. Կիրակոսեան, Հ. Յակոբեան, Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձաւոր Արեւելքի երկրներում, Երեւան, 1960:

²⁶ Ն. Հ. Յովհաննիսեան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958), Երեւան, 1967:

ճեմարանի» աշխատութիւնը²⁷, ուր հեղինակը ճեմարանի կէս դարու պատմութիւնը շարադրելէ անկախ, մանրամասնօրէն կ'անդրադառնայ Սուրիոյ կրթական համակարգի վերիվայրումներուն, նախարարութեան սահմանափակումներուն եւ այլ հարցերուն: Ոչ պակաս արժէքաւոր աշխատութիւն է նաեւ Ն. Յարութիւնեանի Սուրիոյ եւ Լիբանանի կրթօճախներուն վերաբերեալ մենագրութիւնը²⁸:

Սոյն աշխատանքը գրելու ժամանակ յատկապէս կարեւոր տեղեկութիւններ քաղած են Բ. Եղիայեանի «ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972)» աշխատութենէն²⁹ եւ սոյն հեղինակի «Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ» յօդուածաշարքէն³⁰ («Հայաստանի Կոչնակ», Նիւ Եորք, 1948):

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹԻՒՆԸ: Սուրիոյ հայկական համայնքի 1946-1971 թուականներու քաղաքական, ընկերա-տնտեսական եւ մշակութային հիմնահարցերը լուսաբանող սոյն ուսումնասիրութիւնը բաղկացած է ներածութենէ, երեք գլուխներէ, վերջաբանէ եւ օգտագործուած սկզբնաղբիրներու եւ գրականութեան ցանկէ:

ՆԵՐՎՈՒԹԵԱՆ մէջ կը հիմնաւորուի թեմայի ընտրութիւնը, ուսումնասիրուող թեմայի արդիականութիւնը, հրատապութիւնը, գիտական նորոյթը, ուսումնասիրման նպատակն ու խնդիրները: Կը նշուի գործնական նշանակութիւնը եւ աշխատանքի մէջ առաջադրուած հարցերուն տրուած մօտեցումները, կը բացայայտուի քննարկուող թեմայի ուսումնասիրման աստիճանը, ինչպէս նաեւ կը բնութագրուի օգտագործուած սկզբնաղբիրներն ու գրականութիւնը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ կը կրէ «ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ (1940-1971թթ.)» վերնագիրը: Այս գլուխի «Հայերու տեղաբաշխումը Սուրիոյ տարածքին» ենթավերնագրին տակ կը ներկայացուի 1920թ. ֆրանսական մանդատի հաստատումէն մինչեւ 1946թ. Սուրիոյ անկախութեան նուաճումն երկարող ժամանակահատուածը:

Ֆրանսան, Սուրիան գրաւելէ ետք երկրի մէջ կը մտցնէ ռազմական դրութիւն, զոր կը պահպանուի մինչեւ 1925թ.: 1920-1925թթ. ծաւալուած ազգային-ազատագրական պայքարի ընթաց-

²⁷ Յ. Չալաբեան, Յուշամատեն Քարէն Եփփէ Ազգային ճեմարանի, Հալէպ, 1997:

²⁸ Ն. Յարութիւնեան, Լիբանանի եւ Սիրիայի հայկական դպրոցները, Երեւան, 2002:

²⁹ Բ. Եղիայեան, ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), Անթիլիաս, 1975:

³⁰ Բ. Եղիայեան, Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, «Հայաստանի Կոչնակ», Նիւ Եորք, 1948, քիւ 27, 28, 29, 30, 31, 32, 35, 36, 37, 38, 39, 40, 43, 47, 48:

քին ֆրանսացիները մեծ կորուստներ կը կրեն: Չնայած, 1925-1927թթ. պատերազմը կ'աւարտի սուրիացիներու պարտութեամբ, սակայն ան մեծ նշանակութիւն կ'ունենայ: Ան մեծ փորձ էր, որով յետագային սուրիացի ժողովուրդը կ'օգտագործէ ֆրանսական նուաճողները երկրէն դուրս վտարելու ղեւծ պայքարի ընթացքին:

Հայ զաղթականներու հոսքը ղէպի Սուրիա ժամանակաւոր էր: Քսանական թուականներու առաջի կիսուն, զուգահեռաբար կ'ընթանար հայութեան արտագաղթի ընթացքը Սուրիոյ տարածքէն ղէպի ուրիշ վայրեր:

Ժողովրդական այս տեղաշարժերը կը վկայեն այն երեւոյթի մասին, թէ հայ զանգուածը, որ արդէն իսկ հասած էր թշուառութեան եզրին, նոյնիսկ այդ պայմաններու մէջ Սուրիոյ մանդատը ստացած Ֆրանսան կը ջանար օգտագործել հայ զանգուածը, որպէս սուրիական ժողովուրդի ազգային-ազատագրական շարժման ղեմ ուղղուած գործօն: Միայն հայութեան ողջմիտ կեցուածքը հնարաւորութիւն տուաւ վիժեցնել նման ծրագրերը³¹:

1921-1924թթ. Կիլիկիայէն զանգուածային գաղթի պատճառաւ հայ ազգաբնակչութիւնը բաշխուած էր Հալէպ եւ Հիւսիսային Սուրիոյ, Ալեքսանտրէի սանճագի, Պէլլանի, Անտիոքի, Ճէպէլ Մուսայի, Դամասկոսի, Համա-Հոմսի Կեդրոնական Սուրիոյ եւ Լաթաքիա-Շուրը, Քեսապի շրջանները:

1927-1930թթ. Պշերիկցի (քրտախօս հայեր) փախստականներու հոսքը ղէպի ճէզիրէ եւ Հալէպ կ'ունենայ զանգուածային բնոյթ: Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջաններու մէջ կը ձեւաւորուին հայկական փոքրիկ գաղթավայրեր՝ Ճարապուսի, Գամիշլիի, Բագգայի, Տէր Ձօրի, Թէլ Սէմիի, Թէլ Քէօշէի, Թէլ Պրագի եւ Տէրպէսի մէջ: Բացի այդ, Գամիշլիի շրջանին կը կառուցուին շուրջ 25-է արեւի հայկական գիւղեր՝ Ուրթ-ուրթէ, Հըլլըքօ, Տալաուիէ, Տըպանա, Աուճա, Ապու Ճալալ, Թլսում, Ճուխա, Մլուքսարա, Շամասիէ Հըմէրա, Շէյխաճիլ, Ճընէտիէ, Չըրգօ եւ այլն: Գաղթավայրեր կը հիմնուին Հալէպի հիւսիսային սահմաններու վրայ՝ Աֆրիմի եւ Ազէզի մէջ:

Բերիոյ թեմի 1949-1950թթ. վիճակագրութեան համաձայն՝ Հալէպ 32.500 անձ, Գամիշլի՝ 9.107, Թէլ Ապիատ՝ 560, Ազէզ՝ 644, Այն Էլ Արապ՝ 1000, Բագգա՝ 319, Աֆրիմ՝ 81 (շրջակայ գիւղերու մէջ՝ Ճիմտէրես 12, Չուլխան 5, Իքիախըր 2, Կէմրիկ 6, Բէճօ 30 անձ), Մէյտան Էքպէզ՝ 90, Թէլ-Քէօշէ՝ 73, Ռաս ուլ Այն՝ 341, Հասիչէ՝ 350, Տէր Ձօր՝ 270, Տէրիք՝ 248, Տէրպէսիէ՝ 523, Ամուտա՝ 204, Թէլ-Պրագ՝ 70, Քեսապ՝ 551, Գարատուրան՝ 341, Թարթուս՝ 92, Եագուպիէ՝ 426, Ճիսր Էլ Շիդուր՝ 115, Գուպրայիթ՝ 46, Լաթաքիա՝ 778,

³¹ «Ազգակ», օրաթերթ, Պէլլոս, 1962, փետրուար 26, քիւ 302 (9123):

Նարապուս 633, ընկզիկ՝ 60, Արաբ Փունար՝ 990, Մունպուր՝ 60 եւ էլ Ամրի (գիւղ) 80³²:

Երկրորդ ենթավերնագիրով՝ «Հասարակական-քաղաքական կացութիւնը», կը նկարագրուի Սուրիոյ իրավիճակը Բ. աշխարհամարտի տարիներուն, Սուրիոյ անկախութեան նախօրէին: Մանրամասնօրէն կը տրուի երկրի քաղաքական եւ հասարակական կեանքի ընդհանուր պատկերի զարգացման ընթացքը խոչընդոտող երեւոյթները: Նկարագրուած եւ արխիւային նիւթերու, տեղեկանքներու, մամուլի եւ յուշագրութիւններու միջոցով ձեռք բերուած տեղեկութիւններու որոշակի քննական վերլուծութեամբ ներկայացուած են հայ առաքելական, կաթողիկէ եւ անտարանական եկեղեցիներու ունեցած հեղինակութիւնը գաղութահայ կեանքի վերամիաւորման, վերաշխուժութեան առընչութեամբ:

1920թ. Ֆրանսական մանդատի հաստատումէն մինչեւ 1946թ. ապրիլ 17-ին՝ անկախութեան նուաճումը, Սուրիան թեւակոխած էր ազգային-ազատագրական պայքարի այնպիսի ժամանակաշրջան, ուր դուրս գալով սուրիական շրջանակներէն, ձեռք բերած էր համաարաբական նշանակութիւն: Սակայն դժուար կ'ընթանար ազգային անկախութեան ամրապնդման ուղղուած գործընթացը, որովհետեւ դուրսէն հրահրող ներքին անկայունութիւնն ու երկրի աշխարհագրական մասնատումը գաղութային ուժերու կողմէ, Սուրիան վերածած էին «գոյութիւն չունեցող միաւորի»:

1949-1951թթ. յեղաշրջումները մէկը միւսին կը յաջորդէին:

Սուրիոյ Խորհրդարանի նախկին նախագահ՝ եւ գիտնական դոկտ. Իզաթ Աննասի կողմէ կատարուած 1951թ., համայնքային վիճակագրութեան համաձայն, Սուրիոյ նահանգներու հայերու պատկերը հետեւեալն էր³³:

Նահանգ	Առաքելական	Հայ կաթողիկէ
Հաուրան	33	109
Էլ Սուէյտա	385	152
Էլ Ֆուրաթ	1.915	676
Ճեզիրէ	9.150	3.339
Հալէպ	71.651	10.975
Լաթաքիա	6.037	970
Համա	664	54
Հոմս	1.626	1.534
Դամասկոս	61	106
Դամասկոս	17.473	2.305
ընդ. գումար	109.005	19.219

³² ԲԹ ԱԱԱ, դարան Գ., գործ 25:

³³ عزه النص ، الجغرافيه البشريه لسوريه ، شهاده الجغرافيه الاقليميه في جامعه دمشق ، -كليه الآداب 1952-1953، ص. 112.

Սուրիոյ երկարատեւ անկայուն վիճակը 1958թ. փետրուարին կը յանգի Եգիպտոսի եւ Սուրիոյ միաւորման, Միացեալ Արաբական Հանրապետութեան կազմաւորման միջոցով: Ըստ էութեան, Միացեալ Արաբական Հանրապետութեան չէր վիճակուած երկար գոյատեւել: Պէտք է նշել, որ Եգիպտոսի հետ միաւորման երեք ու կէս տարուան ընթացքին (1958-1961թթ.) Սուրիան քաղաքականապէս կը թուլանայ, երբ կ'ամտեսուին անոր զարգացման առանձնայատկութիւններն ու պայմաններու տարբեր ըլլալը՝ համեմատած Եգիպտոսի հետ: Արդիւնքը կ'ըլլայ այն, որ Սուրիոյ մէջ կեդրոնախոյս ուժերը կ'ամրապնդեն իրենց դիրքերը, իսկ 1961թ. սեպտեմբերի 28-ին բանակային քաղաքական խումբը Դամասկոսի մէջ ընդվզումի ծայն կը բարձրացնէ, հռչակելով ազգային կառավարութիւն եւ բոլոր Եգիպտացիներուն կը յորդորէ հեռանալ երկրէն: Երկրէն ներս ծայր առած յուզումներն ու ընդվզումներ, հալածանքներն ու բռնութիւնները պատճառ պիտի հանդիսանային հայերու արտագաղթի դէպի ԱՄՆ, Քանատա եւ Աւստրալիա, ինչպէս նաեւ Արաբական Եմիրութիւններ: Զննարկուող ժամանակահատուածին էր, որ սկիզբ կ'առնէ 1962-1970թթ. դէպի հայրենիք հայրենադարձութիւնը: Արտագաղթի հիմնական պատճառ կը հանդիսանայ նաեւ Կ. Ա. Նասերի վարած քաղաքականութիւնը, յատկապէս քրիստոնեայ փոքրամասնութիւններու նկատմամբ³⁴:

Այս բաժինին մէջ ներկայացուած են նաեւ, տեղական իշխանութեան կողմէ հայ եկեղեցւոյ վայելած հեղինակութեան, Բերիոյ եւ Դամասկոսի թեմերու միջեւ առաջացող պայքարի շարժառիթներու եւ թեմական պառակտումներու, երեք աւանդական կուսակցութեանց մասին արժէքաւոր տեղեկութիւններ, շարադրուած մեծ մասամբ Հայաստանի Ազգային Արխիւէն ձեռք բերուած արխիւային հարուստ նիւթերու վրայ: Սակայն գործող կուսակցութիւններու տեղական արխիւներու ուսումնասիրութիւնը չընձեռնուելուն պատճառաւ, կուսակցութեանց վերաբերեալ հարցերու մեր մօտեցումը եղած է որոշակի լուրջ շրջագիծի սահմաններու մէջ եւ զգուշաւոր. ինչ որ երբեմն միակողմանի տեղեկութիւններ փոխանցելու տպաւորութիւնը կրնայ ձգել ընթերցողին վրայ:

Համայնքի հարցերը, տեղական իշխանութեան մօտ, կը կարգաւորուէր տուեալ համայնքի հոգեւոր պետի միջոցաւ, որպէս այդ փոքրամասնութեան ներկայացուցիչը: Սուրիահայութեան հասարակական ազգային կեանքը կը ղեկավարուէր թեմական այլազան ժողովներու ու մարմիններու միջոցաւ: Եկեղեցւոյ իշխանու-

³⁴ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 283, ք. 4, ք. 5:

թիւնները կը տնօրինէին կրօնա-վարչական եւ մշակութային գործերը:

Սուրիոյ մէջ իր թուաքանակով հայերու երկրորդ հոգեւորական համայնքը կը համդիսանար կաթողիկէն: Կաթողիկէ եւ անետարանական համայնքները Բերիոյ թեմի շրջաններէն ներս ունեցած են իրենց համապատասխան եկեղեցիները, վարժարաններն ու գործող միութիւններն ու բարեսիրական հաստատութիւնները:

Կարեւորեմք մշել, որ հայ առաքելական եկեղեցւոյ մէջ բոյն դրած պառակտումը, բնա կրօնա-դաւանական բնոյթ չունէր, այլ՝ հիմնական բովանդակութիւնը քաղաքական էր, գոր ցայտուն կերպով կը դրսեւորուի 60-ական թուականներուն:

Արդի սուրիահայ համայնքի գոյութեան սկզբնական շրջանին հայ ազգային բոլոր կուսակցութիւնները, արդէն, ծաւալած էին իրենց գործունէութիւնը, որոնք միշտ հանդէս եկած են համայնքէն ներս ազգային ներդաշնակութիւն եւ միասնութիւն ստեղծելու կարգախօսով: Սակայն համայնքի գոյութեան ողջ ընթացքին քաղաքական պայքարը երբեք չէ դադրած, ընդհակառակը ուժեղանալով, հասած է իսկ մինչեւ արհւնոտ բախումներու:

Ընդհանրապէս բեւեռացումը եղած էր երկու հակադիր առանցքներու շուրջ: Մէկ կողմէ հնչակ, ռամկավար, հայ համայնավար խմբաւորումի եւ միւս կողմէ հայ յեղափոխական դաշնակցութեան:

«Տնտեսութիւն, արհեստագործութիւն, եւ այլ զբաղմունքներ» ենթավերնագրով կը ներկայացուի Ա. աշխարհամարտէն ետք Սուրիոյ ժառանգած տնտեսութիւնը: Զննութեան կենթարկուի ֆրանսական գաղութարարներու կողմէ տնտեսական շահագործումը, որովհետեւ անոնք Սուրիան կը դիտէին, որպէս ամենահարուստ գաղութը, սպառման խոշոր եւ կարեւոր շուկայ ֆրանսական արդիւնաբերական արտադրանքներու համար: Կը մշուի 1929-1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի հասցուցած հարուածը Սուրիոյ ժողովրդական տնտեսութեան: Կը բացայայտուի Բ. աշխարհամարտի տարիներուն Սուրիոյ եւ Լիբանանի արդիւնաբերութեան վերելքի մախադրեալներն ու ստեղծուած նպաստաւոր պայմանները: Կը մատնանշուի հայերու նպաստը, երկրի վերելքին, տնտեսութեան տարբեր բնագաւառներէն ներս:

Նշենք, որ համայնքի գոյութեան սկզբնական շրջանի ուժեղ չէր առեւտուրով զբաղողներու կազմը, քանի դեռ չէր կուտակուած բաւարար դրամագլուխ: Բայց շուտով պատկերը կը սկսէր փոխուիլ եւ առեւտուրով զբաղողները անլի լուրջ տեսակարար կշիռ կը ստանան համայնքէն ներս: 30-ական թուականներուն արդէն ձեռք կը բերուի նիւթական ինքնաբաւութիւն, համայնքէն ներս կը ստեղծուին տնտեսական անհրաժեշտ խարիսխներ, որոնց վրայ պիտի յենուէր ազգային կեցութեան ինքնահաստատման շարժընթացը:

Հայերու մեծամասնութիւնը արհեստաւորներ էին: Գրեթէ մենաշնորհային դիրք ունէին «ալաջա» գործուածքի, Նշարթվա (մետաքսեայ հիւսուածեղէնի կանխահաս արդիւնաբերական ձեռնարկ) հիւսուածեղէնի, ասեղնագործութեան գորգագործութեան, մետաքսագործական, ծուլագործական, պղնձագործական, մեքենաներու վերանորոգման, կօշկակարական արհեստանոցները: Բացի այդ, հայերը Սուրիոյ տարածքին իրենց ձեռներեցութեամբ, զգալի քանակութեամբ կը զբաղեցնէին պետական ձեռնարկութիւններէն ներս պետական պաշտօններ: Սուրիոյ խորհրդարանէն ներս հայերը մշտապէս ունեցած են իրենց ներկայացուցիչները: Երկրին տուած են պետական բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնատարներ, դիւանագետներ ու ազգային պաշտպանութեան ճակատի երեւելի գործիչներ³⁵:

Հայերը իրենց ներդրումը ունեցած են երկրի կառուցապատման (ճանապարհներու, քաղաքաշինութեան) եւ պատմական հնութիւններու պահպանման գործին: Դրամատան ոլորտի մէջ, բաւականին զգալի եղած է մաեւ, հայերու դերը:

Մեծ էր հայերու նպաստը առողջապահութեան եւ բժշկագիտութեան բնագաւառէն ներս: Հալէպի մէջ կը գործէին Ալթունեանի, Ա. ճեպեճեանի եւ Յ. Յովմանեանի կառուցած հիւանդանոցները³⁶:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ կը կրէ «1946-1970ԹԹ. ՀԱՅՐԵՆԱՎԱՐԸ-ԶՈՒԹԻՒՆԸ» խորագիրը, ուր կը պարզաբանուի 1946-1948թթ. եւ վաթսուական թուականներու հայրենադարձութեան պատմութեան հանգամանքները: բաղկացած է երեք ենթաբաժինէ՝

1. Սուրիահայութեան հայրենադարձութիւնը 1946-1948թթ..
2. Հայրենադարձութիւնը 1962-1965թթ..
3. Հայրենադարձներուն նպաստը հայրենիքին.

«Սուրիահայութեան հայրենադարձութիւնը 1946-1948թթ.» ենթավերնագրով կը ներկայացուի խորհրդային Միութեան ժողովրդական Կոմիսարներու խորհուրդին համաձայն, ԽՍՀՄ կառավարութիւնը 1945թ. մոյեմբերի 21-ին ընդունած որոշումը, սփիւռքահայութեան ներգաղթը խորհրդային Հայաստան իրականացնելու մասին: Կոմիտէի պաշտօնական հաղորդագրութիւնը, 1945 դեկտեմբեր 21-ին, սփիւռքահայ ներկայացուցիչներու՝ տեղական կոմիտէներ ստեղծելու եւ ցուցակագրման աշխատանքներ ձեռնարկելու:

³⁵ Ե. Հ. Նաճարեան, Հայ-արաբական մշակութային կապերը (Սուրիա, Լիբանան 1945-1970), «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հ. Զ., էջ 263:

³⁶ - الاستاذ الطبيب طه اسواق الكيالي ، تاريخ الطب و الاطباء في حلب و اطباء الاسنان ، الجزء الاول، حلب، 1999، ص 154-155، 184-182، 316، 320-322 والصيادله ، 345-341

Կը պարզուի հայրենակցական եւ բարեսիրական միութիւններու նպաստը Ներգաղթի իրագործման համար: Կատարուող նախապատրաստական աշխատանքները: Կը քննարկուին կուսակցութիւններու նպաստն ու դիրքորոշումը կազմակերպման ու իրականացման վերաբերեալ: Որոշակի վերլուծման կ'ենթարկուին 1946թ. հայրենադարձութեան հետ առընչուող այն նախադրեալները, որոնք հասունանալով անխուսափելի պիտի դարձնէին գաղութն ներս սկիզբ առած ներգաղթի մեծ ոգեւորութիւնը եւ պատճառ պիտի հանդիսանային գաղութի պառակտումին:

ՀՍՄԿ նախարարներու խորհուրդի յանձնարարութեամբ, 1946թ. յունիս-յուլիս, Սուրիայէն եւ Լիբանանէն, Երեւան պիտի հայրենադարձուէր 1.130 հայ ընտանիք, շուրջ 4.520 մարդ. «Փաստօրէն մենք ուղարկել ենք 1946թ. յունիս-յուլիս ամիսներին, 1.157 ընտանիք, 5.883 մարդ, այդ թուին Սուրիայէն 517 ընտանիք (1.097 մարդ)³⁷:

Սուրիոյ կառավարութիւնն ու նախարարաց խորհուրդը հետաքրքրուած ներգաղթողներու վիճակով եւ օրեցօր ցուցակագրման թուաքանակով, շահագրգռուող մարմիններէն կը պահանջեն յետայսու ներկայացնել ներգաղթող հայրենակիցներու անուանացանկը մեկնումէն առնուազն 3 օր առաջ՝ պետական տուրքի հաշիւները կարգադրելու համար³⁸: Իրականութեան մէջ Սուրիոյ կառավարութիւնը սկզբունքով համաձայն էր սուրիաբնակ հայերու հայրենադարձութեան որոշումին: Սակայն գաղթի հետեւանքով որբէ անպատեհութիւն առաջք առնելու միտումով նախարարութիւնը կ'որոշէ իրական կամ նիւթական ամէն կայ անջատելու՝ ներգաղթող հայերու եւ Սուրիոյ միջեւ որոշում կայացնելու: Սուրիական դաշինքն անգամ «օրակարգի նիւթ դարձուց Սուրիայէն դէպի Խորհրդային Հայաստան մեկնող հայերու խնդիրը, անոնց շարժում գոյքերու պարագան եւ զանոնք սուրիական հպատակութենէ զրկելու հարցը»³⁹:

1946թ. յունիսէն մինչեւ հոկտեմբեր, Սուրիայէն եւ Լիբանանէն Խորհրդային Հայաստան կը ներգաղթեն ութ կարաւան, 3.794 ընտանիք (19.253 մարդ): Իսկ 1947թ. տուեալներով, յուլիսի 4-էն մինչեւ 25 հոկտեմբեր, հինգ կարաւան՝ 1.280 ընտանիք, 7.070 մարդ⁴⁰:

Ըստ Սուրիոյ եւ Լիբանանի Ներգաղթի կեդրոնական կոմիտէի ՀԲԸՄ-ի նախագահի ուղղուած նամակին՝ 1946-1947թթ. Սուրիայէն եւ Լիբանանէն դէպի հայրենիք ներգաղթած են 5.934 ընտա-

³⁷ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 104, ք. 17-18:

³⁸ د. الكسندر كشيديان ، صفحات و ثائقه من جريدته « التقدم » الحلبيه عن الاحوال الارمنييه و العربييه في الدوله العثمانيه و البلاد الشاميه، ص. 302-303، 451.

³⁹ «Արեւելք», 1946, յուլիս 6, թիւ 10:

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 196, ք. 1:

նիք, այսինքն՝ 31.319 մարդ, ընդ որուն 1.189 ընտանիք (6.347 մարդ) Հալէպէն ու 490 ընտանիք (2.598 մարդ) Դամասկոսէն⁴¹: Կարելորենք նշել, թէ Սուրիայէն եւ Լիբանանէն ներգաղթողները մեծ մասամբ աղքատ էին եւ ի վիճակի չէին ծանապարհածախսը վճարելու. «Ընդհանրապէս ներգաղթի առաջին կարաւաններով Հայաստան մեկնեցան այնպիսի անձիք, որոնք Միջին Արեւելքի երկիրներու մէջ յարմար գործեր չունենալով, պիտի փորձէին իրենց բաղդը որոնել հայրենիքի մէջ»⁴²: Ուստի, միայնգամայն պարզ կը դառնայ այն երեւոյթը, թէ բարեգործականն ու տեղական հայկական կազմակերպութիւններն անգամ օժանդակէին ներգաղթողներու փոխադրութեան ծախսերուն, անբաւարար պիտի համարուէր, եթէ ներգաղթողները չնչին գումարներով իրենց մասնակցութիւնը չցուցաբերէին:

«Հայրենադարձութիւնը 1962-1965թթ.» ենթավերնագրով կը քննարկուի 1950-1960 ժամանակահատուածին, երկրէն ներս տիրող անբարենպաստ պայմանները, յատկապէս տնտեսութեան բնագաւառէն ներս, զոր արդիւնք էր Սուրիոյ մէջ Կ. Ա. Նասէրի հաստատած քաղաքականութեան, որու հետեւանքով կ'ոտնահարուէր միջին եւ մանր արհեստաւորներու եւ վաճառականներու շահերը եւ որ առիթ պիտի ստեղծէր արտագաղթի:

1958թ. յունուարի գլխաւոր հիւպատոսարանի պաշտօնական բացումն ու 1959թ. նոյեմբերին երգի ու պարի հայկական հանոյթի եւ երեւանեան «Սպարտակ» ֆութպոլիստներու խումբի ժամանումը Հալէպ, նոր ազդակներ պիտի հանդիսանային տեղական համայնքի կապերու աշխուժացման եւ զանգուածային հայրենադարձութեան իրագործման:

Սուրիոյ եւ Լիբանանի մէջ տիրող քաղաքական իրադրութիւնը, չէր կրնար իրականացնել 1962-1963թթ. սկստող հայրենադարձութիւնը: Դէպի Խորհրդային Հայաստան ներգաղթի իրականացման մէջ մեծ դեր ունեցաւ 1964թ. Սփիւռքահայութեան հետ կապի կոմիտէի ստեղծումը:

Այս ենթաբաժինով մանրամասն կը տրուի Սուրիոյ կառավարութեան կողմէ կարգ մը սահմանափակումներ, կապուած հայրենիք վերադառնալու թոյլտուութեան եւ համապատասխան ցուցակներու պատրաստման: Անոնց ուղեբեռի մաքսային զննման եւ անհատական ելքի վիզայի հարցերուն վերաբերեալ: Նաեւ, Սուրիա-

⁴¹ Արամոյէն եւ Լարափայէն 67 ընտանիք (359 մարդ): Ճէզիրէէն 301 ընտանիք (1602 մարդ), Աֆրինէն 95 ընտանիք (463 մարդ), Զլսապլն 446 ընտանիք (2.738 մարդ): Ս. Ղազարեան, Հայկական փոքր զաւառներ, զրքին մէջ ներգաղթող ազգեցիներու թիւը կը նշէ 100 ընտանիք: Տե՛ս, Ս. Ղազարեան, Հայկական փոքր զաւառներ Ազգ Աֆրին Արաբ Փունար, Պէյրութ, 1965: Նաեւ՝ «Եփրատ», 1947, նոյեմբեր 23, թիւ 3088:

⁴² د. الكسندر كشيديان ، المصدر نفسه، ص 300.

ներու վերաբերեալ, ինչ որ կրնար մեկնումի փաստաթուղթերու ձեւակերպման եւ գործնական հայրենադարձութեան իրագործման որոշումին ուշացումին:

Սակայն, տեղական իշխանութեան սահմանափակումները պէտք չէ ընդունիլ իրենց բացասական դիրքի որդեգրումով, այլ այն պարզաբանութեամբ, թէ երկրէն այնքան գործունեայ եւ ձեռներեց մարդոց դուրս գալը կրնար ազդէր երկրի տնտեսական ու մշակութային կեանքի բնականոն ընթացքին: 1962-1965թթ. նախատեսուած էր Սուրիայէն հայրենադարձնել 10 հազար մարդ, սակայն իրականութեան մէջ հայրենիք վերադարձած է 4.673 մարդ⁴³: Յետագայ տարիներուն զանգուածային ներգաղթը դէպի Խորհրդային Չայաստան չ'իրականանար, երկրէն ներս տիրող քաղաքական վերիվայրումներուն պատճառաւ: Անհատական ելքի վիզաներով մինչեւ օրս կը շարունակուի հոսքը դէպի Չայաստան, մասնաւանդ 28 Մայիս 1993-ին, Չալէպի մէջ Չայաստանի Չանրապետութեան Ընդհանուր Յիւպատոսութեան հաստատումէն ետք:

«Չայրենադարձներուն նպաստը հայրենիքին»։ Ենթավերնագիրի տակ կը ներկայացուին հայրենիքի մէջ ծաւալած աշխատանքներու մասին տեղեկութիւններ: Սփիւռքէն հայրենիք վերադարձող մարդկանց ընդգրկումը արդիւնաբերութեան եւ այլ բնագաւառներէն ներս: Սփիւռքահայերու, ի մասնաւորի սուրիահայ հայրենադարձներու նպաստը հայրենիքին:

ԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ վերնագրուած է «ՍՈՒՐԻԱՅԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՆԱՆԵԸ», ուր փորձած ենք ներկայացնել հայկական սփիւռքի գոյացման հիմնական հիմնախնդիրի՝ ազգային ինքնագիտակցութեան, մշակոյթի եւ լեզուի պահպանման վերաբերեալ հարցեր:

«Դպրոցներ» ենթավերնագիրով փորձ կատարուած է քննութեան առարկայ դարձնել սուրիահայ կրթօճախներու գոյութեան ու պաշտպանման հարցը, երկրի տնտեսական, ընկերային եւ քաղաքական ներազդեցութիւնը ուսման համակարգի, ֆրանսական գաղութարարներու եւ անկախութենէ ետք տեղական իշխանութեանց կողմէ արաբերէն լեզուի պարտադիր ուսուցումն ու այլ սահմանափակումներ: Կազմուած են Սուրիոյ հայ կրթօճախներու աշակերտութեան վիճակագրական պատկերը բնութագրող թուական պատկերներու աղիւսակներ:

Նշենք, որ Սուրիոյ հանրակրթական վարժարանները իրենց ծագման օրէն օգտուած են ներքին ինքնավարութեան իրաւունքէն: Առաջնորդուած են սեփական ուսումնական ծրագիրով, որու ուսուցման հիմքը եղած է հայոց լեզուն: Սուրիոյ հայ ազգային վարժարանները ծխական բնոյթ ունենալով, սկզբունքով կապուած եղած են Չայ առաքելական եկեղեցւոյ թեմին եւ վայելած անոր

հովանաւորութիւնը: Ուսումնա-դաստիարակչական հարցերով՝ ենթակայ թեմական ուսումնական խորհուրդի, որու պարտականութիւնն էր դպրոցներու կանոնագիրներու եւ ծրագիրներու կազմումն ու անոնց գործադրումը, համապատասխան դասագիրքերու հրապարակումը: Խորհուրդի իրաւասութեան սահմաններու մէջ են կրթական գործերով անմիջական կապ հաստատել թաղական խորհուրդներու եւ վարժարաններու հոգաբարձութեանց հետ:

Արաբերէն լեզուի ուսուցումը հայկական կրթօճախներէն ներս, քառասունական թուականներու կէսերուն, նախնական էր եւ ոչ պարտադիր: Հիմնական շեշտը դրուած էր հայոց լեզուի եւ հայագիտական առարկաներու վրայ: 1949թ. կրթական նախարարութեան կողմէ սահմանուած նոր օրէնքը կը շեշտէր արաբերէն լեզուի ուսուցման ու ընդհանրացման կարելոթիւնը, մասնաւոր դպրոցներէն ներս: Օրէնքը կը միտէր համայնքային դպրոցներու վերահըսկողութեան ու տնօրինման: Առաւել, պետական պաշտօններէն եւ համալսարանական կրթութենէն կը զրկուէին բոլոր անոնք, որոնք չ'ունէին պետական համապատասխան վկայականներ:

1967թ. առաջուած յանձնարարագրով կրթութեան նախարարութիւնը կը հաստատէր պետական տնօրէններու նշանակումը սեփականատէր տնօրէնութեան կողքին, հայերէն լեզուի դասապահերու նուազում եւ մասնաւոր դպրոցներու անուանական փոփոխութիւն⁴⁴:

1967թ. թեմական խորհուրդի եւ յառաջդիմական ճակատի միջնորդութեամբ կրօնը կը ճանչցուի պարտադիր առարկայ⁴⁵: Սակայն հայոց լեզուն մինչեւ օրս նման ճանաչում չէ ունեցած, ինչ որ պատճառ պիտի հանդիսանար, հայ երիտասարդութեան ոչ թէ արաբահայութենէ հեռացումի, այլ՝ հայկականութենէ:

«Մամուլ» ենթավերնագրով կը ներկայացուին սուրիահայ մամուլի դերը, գաղութահայ կեանքի ազգային եւ մշակութային դիմագիծի պահպանման ու զարգացման: Նաեւ՝ տիրող քաղաքական իրադրութեան պատճառաւ, հայ մամուլի անցած դժուարին ուղին, դիմագրաւած դժուարութիւններն ու տեղական իշխանութեան կողմէ կատարուած սահմանափակումները: Յաջորդաբար կը նշուին տարեգիրքերու, օրաթերթերու, ամսագրերու, պարբերականներու եւ աշակերտական ձեռնարկներու անուններ, որոնք մեծ ներդրում ունեցած են, որպէս տեղեկատու, գաղութահայ կեանքի որոշակի հարցերու պարզաբանման:

⁴⁴ «Չարթօնք», օրաթերթ, Պէյրութ, 1967, հոկտեմբեր 22, թիւ 8970 (թիւ 127 օրէնք-հրամանագիր՝ «մերսում»-ի հրապարկումը նոր իրաւակարգի առաջ դրաւ հայկական դպրոցներու պետքը):

⁴⁵ ԲԹ ԱԱԱ, դ. Բ., գ. 55 (9 սեպտեմբեր 1967 թուակիր նամակի պատճեն արաբերէն):

⁴³ Տե՛ս, Հ. Ու. Մելիքսէթեան, նշուած աշխատութիւն, էջ 255, 279:

«Գրականութիւն» ենթավերնագրով կը ներկայացուի սփիւռքի պայմաններու մէջ հայ գրողի բերած նպաստը եւ հայ-արաբ գրական մերձեցումը գրական անդաստանէն ներս:

Կոտորածի արհաւիրքէն ազատած հայը պայքարեցաւ թէ՛ ֆիզիքական գոյութիւնը պահպանելու եւ թէ՛ ալեկոծ հոգեւոր կեանքը շարունակելու համար: Սկիզբը կը թուէր, թէ սփիւռքի պայմաններու մէջ անկարելի պիտի ըլլար իսկական գրականութիւն ստեղծել: Բայց ստեղծուեցաւ, գրողներու անձնագրի, հերոսական ջանքերով եւ դարձաւ հայ գրականութեան մեծ հարստութեան անբաժան մասը:

Այս բաժինին մէջ արծարծուած են սփիւռքի գրականութեան հիմնական որոշակի հարցերու, տեղ գտած նախապատերազմեան եւ յետպատերազմեան շրջանին սփիւռքի հայ գրողները յուզուող հարցերու շուրջ թեմաներու պարզաբանումը:

Հայրենիք-սփիւռք կապերը, սփիւռքահայ գրողներու, արուեստագէտներու համար ընձեռնեցին հողը՝ հայրենի, անձամբ տեսնելու, զգալու կարելիութիւնը: Սակայն անկիւնադարձային եղաւ, քառասունական թուականներուն, արաբական գրաւոր մշակոյթի հաղորդման առաջին փորձերը:

«Թատերական կեանքը» ենթավերնագրով կը բացայայտուի այն, որ սուրիահայ, ի մասնաւորի հալէպահայ, թատերական կեանքի ուսումնասիրութիւնը հետազօտողներու տեսադաշտէն դուրս մնացած է: Հայ թատրոնի պատմութիւնն անգամ անտեղեակ մնացած է թատերական գործունեութեան փաստին: Այստեղ որոշակի կերպով կը ներկայացուին հալէպահայ թատերական կեանքի նախադրեալները, սկզբնական քայլերը, անոր ունեցած կարեւոր ներդրումը երկրէն ներս, դպրոցի կողքին, որպէս հայապահպանման կարեւոր ազդակներէն մէկը:

1920-1950թթ. կը նշմարուի սեփական թատրոն ստեղծելու միտումը, կ'ուրուագծուի թատերական արուեստի զարգացման ուղիները: Մեծ ներդրում կ'ունենան տարբեր ժամանակներով Հալէպ այցելած թատերախումբերու այցելութիւնը:

Այստեղ կը նշուին գաղութէն ներս գործող թատերախումբերը, հայ-արաբ թատերական մերձեցման նախադրեալները եւ սուրիահայ թատերական կեանքի վերելքին ու զարգացման նպաստող միջոցները:

«Հայրենակցական, մշակութային եւ մարզական միութիւններ» ենթավերնագրով կը ներկայացուին սուրիահայութեան կեանքը հունաւորող հայրենակցական, մշակութային եւ մարզական միութիւններու մասին համառօտ պատմականներ: Անդրադարձած ենք նաեւ Բարեգործականի գործունեութեան Սուրիոյ տարածքին: Գաղթօճախէն ներս գոյութիւն ունեցած հայրենակցական միութիւններու առաջ ծառայած դժուարութիւնները, որոնք բոլոր հնարաւոր միջոցներ ստեղծեցին արհաւիրքէն փրկուածներու ապրուս-

տը հայթայթելու եւ զարկ տալու հայապահպանման գործին: Առաւել անոնց հիմնական առաքելութիւնը գաղութահայ կեանքէն ներս:

Հայրենակցական միութիւնները, ընդհանրապէս, կոչուած էին օգնելու միայն կարիքաւոր հայրենակիցներուն, հեռու ազգային կուսակցութիւններու վերահսկողութենէ: Սակայն աւելի ուշ անոնք պիտի ներգրաւուէին այս կամ այն կուսակցութեան կազմին մէջ:

Աշխատանքի ոչ պակաս ձեռնամուխ եղան մշակութային միութիւնները: Սփիւռքահայ կեանքի պայմաններու բերումով մշակոյթի իւրայատուկ կազմակերպիչներ հանդիսացան հայ եկեղեցւոյ արտասահմանեան թեմերու առաջնորդները, որոնք տեղական իշխանութեան առաջ կը ներկայացնէին հայ համայնքի շահերը: Մշակութային միութիւնները նպատակասլաց գործունեութեամբ, դժուարին պայմաններու ներքոյ, ոչ միայն պահպանեցին նախկին արժէքները, այլեւ զարգացուցին եւ հարստացուցին նորերով: Ընդգրկուած մշակութային միջոցառումներով նպաստեցին հնարաւոր միջոցներով հայ-արաբ մշակութային մերձեցման եւ փոխներգործութեան:

Սոյն բաժինն մէջ կ'ընդգրկուին եւ կ'առանձնանան այն մշակութային եւ երիտասարդական միութիւնները, որոնք կ'առաջնորդուէին այս կամ այն կուսակցութեանց գաղափարախօսութեամբ:

Սփիւռքի հասարակական կեանքի մէջ իւրայատուկ տեղ կ'ունենայ մարզական շարժումը. ո'չ միայն պատանիներու եւ երիտասարդներու համախմբման ու դաստիարակութեան, այլ նաեւ գաղութահայութեան տարբեր հայացքներու տէր խաւերու համախմբումով:

Բացի առաքելական համայնքի կազմակերպութիւններէ, գաղութէն ներս կը գործէին կաթողիկէ⁴⁶ եւ աւետարանական⁴⁷ համայնքներու հովանաւորութիւնը վայելող միութիւններ:

«Սուրիոյ եւ Խորհրդային Հայաստանի մշակութային կապեր» ենթավերնագիրին տակ կը տրուին քառասունական թուականներէն ետք, Սուրիոյ եւ Խորհրդային Հայաստանի մշակութային կապերու մերձեցման նախադրեալները: Ատոնց զարգացման ընթացքը եւ խոչընդոտող երեւոյթներու վերաբերող հարցեր:

1944թ. փետրուարին Խորհրդային Հայաստան-սփիւռք կապերը սկսած էին իրականանալ վերստեղծուած Հայկական ՍՍՀ արտաքին գործերու ժողովրդական կոմիսարիատի եւ Արտասահմանեան երկիրներու հետ մշակութային կապի հայկական ընկերութեան (ԱՕԿՍ) հիմնաւորումով:

⁴⁶ Պ. արք. Միրիաթեան, Հալէպի հայ կաթողիկէ թեմը երէկ եւ այսօր, «Պարբերաբերք», Հայ կաթողիկէ առաջնորդարանի, Հալէպ, 1993, դեկտեմբեր 25, էջ 48-66:

⁴⁷ «Տեղեկագիր» Հայ աւետարանական համայնքի մասին, 2001թ. (անոխպ):

Հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները առաւել սերտ բնոյթ կը ստանան 1964թ. յունիսին, Սփիւռքահայութեան հետ մշակութային կոմիտէի ստեղծումէն ետք: Կոմիտէի ստեղծումը կարելոր իրադարձութիւն կը լլայ համահայկական իմաստով: 1962թ. սփիւռքահայ ուսուցիչներու Ա. խումբի եւ 1964թ. սփիւռքահայ պատանի դպրոցականներու Ա. խումբի հրաւեր-այցը Հայաստան, ինքնին խօսուն փաստ էր հայրենիք-սփիւռք փոխ-յարաբարութեան սերտացման, չնայած որ այդ ժամանակահատուածին եւս առկայ էին յարաբերութիւնները խոչընդոտող ազդակներ:

Հայրենիք-սփիւռք յարաբերութիւնը պիտի նպաստէր հայարաբական կապերու զարգացման, եթէ հտրհրդային Միութեան հետ տնտեսական բնագաւառէն ներս, ապա՝ հտրհրդային Հայաստանի հետ մշակութային ոլորտէն ներս:

ԿԵՐՋԱԲԱՍԻ մէջ հանրագումարի կը բերուին Սուրիոյ հայկական համայնքի 1946-1971թթ. քաղաքական, հասարակական-տնտեսական եւ մշակութային կացութեան ուսումնասիրութեան արդիւնքները:

• Առաջին կարելորագոյն ձեռքբերումը այն հոգեբանական վիճակն էր, որ առաջացաւ գաղթականներու մօտ: Անոնք ապաստանելով Սուրիոյ տարածքին հիւրընկալուեցան արաբ ազգաբնակչութեան կողմէ: Կրցան իրենց կեանքը այնպէս ընդելուզել զիրենք շրջապատող ընկերային պայմաններուն, բարքերուն, մտայնութեան, լեզուին ու մշակոյթին հետ, որ մէկ կողմէ իրենց հայկական դիմագիծը ամուր պահելով հանդերձ կրցաւ նաեւ շրջանցել զիրենք անջատող լեզուական, մշակութային, հոգեբանական արգելքները իրենց շրջապատին հետ:

• Հայերը եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին գերագոյն շահերը իրենց համար նուիրական սրբութիւն դարձնելով հանդերձ, սուրիական հայրենիքին գերագոյն շահերուն ու իրաւունքներուն նկատմամբ ցուցաբերեցին բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութիւն ու խոր կապուածութիւն: Դարձան արաբական երկիրներու լիիրաւ քաղաքացիները եւ իրենց ամբողջ տաղանդը, ստեղծագործական կարողութիւնները դրին ի նպաստ այդ երկիրներու քաղաքական եւ տնտեսական զարգացման:

• Քաղաքական-իրաւական, տնտեսական եւ բարոյական-մարդասիրական սկզբունքներու վրայ խարսխուած էր հայ-արաբական քաղաքական համագործակցութիւնը նորագոյն շրջանին: Անկասկած որ նոյն էր պարագան Սուրիոյ հայկական համայնքի պարագային: Հայերու եւ արաբներու համատեղ հանդէս գալը դրսեւորուեցաւ նաեւ անոնց զինական համագործակցութեան մէջ:

• Հայերէնի կողքին, արաբերէն լեզուի լաւ իմացութեամբ, սուրիահայը կրցաւ մօտէն հաղորդ դառնալ արաբական գրականութեան ու մշակոյթին եւ նպաստեց անոր զարգացման:

• Չանգուածային մեծ հայրենադարձութեան (1946-1948թթ.) տարիներուն, հակառակ խոչընդող հանդիսացող արգելքներուն, Սուրիայէն եւ Լիբանանէն 1946-1947թթ. դէպի հայրենիք ներգաղթեցին 5.934 ընտանիք, այսինքն՝ 31.319 մարդ, ընդ որուն 1.189 ընտանիք (6.347 մարդ) Հալէպէն ու 490 ընտանիք (2.598 մարդ) Դամասկոսէն, Արամոյէն եւ Լաթաքիայէն 67 ընտանիք (359 մարդ), ճեզիրէն 301 ընտանիք (1.602 մարդ), Աֆրիկէն 95 ընտանիք (463 մարդ), Քեսապէն 446 ընտանիք (2.738 մարդ) եւ այլն: Յետագայ տարիներուն (1964-1966թթ.) շարունակուող հայրենադարձութեան, Սուրիոյ հայերը եւս, անհատական կամ հաւաքական վիզաներով ներգաղթեցին հայրենիք:

• Ներգաղթը նպաստեց հայրենիքի վերելքին, հակառակ գաղութներէն ներս ստեղծուած պառակտումներուն, լարուած իրավիճակին եւ տեղական մարմիններու սահմանափակումներուն:

• Վաթսունականներուն, տիրող քաղաքական, տնտեսական եւ ընկերային բոլոր պայմանները, առաւել գաղութի նոսրացման առաջացող վտանգը, արտագաղթը, Պասս կուսակցութեան մէջ տիրող ոչ բարենպաստ պայմանները, Սուրիա-Իսրայէլ պատերազմը ինկած ժամանակաշրջանը ինքնին փոթորկալից տարիներ էին, թէ տեղացիներուն եւ թէ հայերուն համար:

Սուրիահայ գաղութը, իր դիմագրաւած բազմաթիւ դժուարութիւններով հանդերձ մինչ օրս կը գոյատեւէ: Սակայն, Սփիւռքի սպառնացող վտանգը, այսօր, տարբեր երկիրներու մէջ կատարուող ռազմական անցուդարձերու քաղաքական, ընկերա-տնտեսական ու ազգային հարցերն են, որոնք հետեւանքով վերջին տասնամեակներու ընթացքին ենթարկուած է զգալի փոփոխութիւններու: Նկատուող ընդհանուր երեւոյթը այն է, որ մէկ կողմէ աւելի ու աւելի սակաւամարդ սկսած են դառնալ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայկական հին գաղթավայերը, իսկ միւս կողմէն այլ երկիրներու մէջ ստեղծուած են նորերը կամ զգալիօրէն ստուարացած է տարբեր երկիրներու հայ բնակչութեան թիւը:

Ատենախօսութեան թեմայով հրապարակուած են հետեւեալ յօդուածները:

1. Սիրիահայ կրթական հաստատութիւնները 1920-1980թթ., «Կանթեղ», Երեւան, 2003, թիւ 1, էջ 155-165:
2. Սիրիահայ գաղթօճախը Բ. Աշխարհամարտից հետո (1940-1970թթ.), «Կանթեղ», Երեւան, 2003, թիւ 3 (16), էջ 186-193:
3. Սիրիահայերի ներգաղթը հտրհրդային Հայաստան (1960-ական թվականներ), « Բանբեր Հայաստանի արխիվների », Երեւան, 2003, թիւ 2, էջ 127-140:

الجالية الأرمينية في سورية أعوام (1946-1971)

الدراسة لتحصيل درجة علمية في دكتوراة بالعلوم التاريخية.
دفاع الرسالة ستجري في 14 أيار 2004، الساعة الثانية ظهراً. في جلسة لجنة الإختصاص بقسم التاريخ في أكاديمية العلوم الوطنية.
يريفان، شارع مارشال بگراميان 24 ك.

هذه الرسالة التي تتحدث عن أوضاع الجالية الأرمينية في سورية (1946-1971) هي من أهم المواضيع غاية، حيث تساهم في استكمال دراسة تاريخ الشعب الأرميني. حتى اليوم يفقد التاريخ الأرميني لموضوع شمولي يبحث في حياة الجالية الأرمينية في سورية. إن هدف هذه الدراسة تكمن في استكمال هذا الفراغ. نتاج هذه الدراسة تساهم في تشكيل الخاصيات المشتركة للجاليات الأرمينية في أصقاع الأرض. وكملحق للدراسات الصادرة عن الأكاديمية الأرمينية في مجال التاريخ.

تتوزع أبحاثه إلى ثلاثة فصول، خاتمة، ومرجع.

الفصل الأول يتحدث عن الاستيطان القسري للأرمن في عدة مناطق من سورية الكبرى إثر المذابح وسياسة البطش التي اتبعتها الدولة العثمانية، وأرقوها بعمليات نفي وتهجير وتشريد المواطنين الأرمن. الفصل يبحث أيضاً في أوضاع الأرمن الاجتماعية والسياسية والاقتصادية (1946-1971)، ويشير إلى المواقف التي تبناها أبناء الجالية الأرمينية جنباً إلى جنب مع إخوانهم العرب في نضالهم ضد المستعمر الطاغى أثناء حرب التحرير الوطني وفترة الاستقلال، ويعالج مواقف الأحزاب السياسية الأرمينية من هذا الصراع.

الفصل الثاني ألا وهو هجرة الأرمن إلى أرمينيا السوفياتية أعوام (1946-1970)، يتعمق في المسائل المتعلقة بهجرة الأرمن إلى الوطن الأم أرمينيا. وتحت ضوء هذه المعالجة يُبرز بنية الصراع الناتج بين الأحزاب الأرمينية حول كيفية انجاز عملية الهجرة وميزاتها. ويبحث في مساهمة ومشاركة الجالية الأرمينية في تطوير حياة أرمينيا السوفياتية سياسياً وإجتماعياً وثقافياً.

في الفصل الثالث والأخير تبحث الدراسة في مراحل التطور التي مرت بها الجالية الأرمينية في المجال الثقافي، ومساهماتهم بشكل عام في تطوير الحياة الثقافية في سورية (مدارس، صحافة، أدب، حياة مسرحية، جمعيات أهلية وثقافية ورياضية). كذلك نجد في هذه الدراسة قسم خاص يتكلم عن العلاقات الثقافية المتبادلة بين سورية وجمهورية أرمينيا السوفياتية. وفي الخاتمة نستخلص نتاج الدراسة التي أجريت حول الأوضاع المذكورة أعلاه.

Армянские общины в Сирии в 1946 - 1971 годах.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07. 00.01 – “История Армении”

Защита состоится 14 мая 2004г. в 14⁰⁰ по адресу 375019, г. Ереван ул. Маршала Баграмяна 24^а на заседании специализированного совета 004 при Институте истории Национальной Академии Наук РА.

Резюме

Диссертационная работа посвящена изучению истории армянских общин в Сирии в 1946 – 1971 годах. До настоящего времени в армянской историографии не было обобщающего исследования, посвященного целостной истории сирийской армянской общины данного периода и диссертационная работа имеет целью восполнить этот пробел. Результаты исследования могут быть использованы при создании истории зарубежных армянских общин, а также при изложении академического издания “Истории Армении”.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и исследований.

В первой главе рассматривается вопрос формирования армянских общин в Сирии как результат депортации и геноцида армян в Османской империи. В крации освещается история этих общин до 1940 года, а далее рассматриваются проблемы, посвященные общественно – политическому положению армян в Сирии в 1940 – 1971гг. Исследуются также участие сирийских армян в национально – освободительном движении Сирии и позиции армянских национальных партий в отношении этого движения.

Важное значение для диссертационной работы имеет вторая глава, посвященная проблеме репатриации сирийских армян в 1946 – 1970 годах. Детально и на надлежащем научном уровне освещается борьба, возникшая между разными армянскими течениями и партиями вокруг репатриации. Отдельно рассматривается детальное участие репатрированных сирийских армян в экономической, общественной и культурной жизни Советской Армении.

В третьей, заключительной главе подвергается всестороннему исследованию развитие культурной жизни в армянских общинах Сирии (школа, средства массовой информации, театральная жизнь, и спортивные общества) и участие армян в культурной жизни страны. Учитывая всю

важность культурных связей между Сирией и Советской Арменией, данная проблема рассматривается в отдельном разделе.

В заключении обобщены результаты исследования, даны основные выводы и заключения автора.

ANI AVADIS FCHNKJIAN

THE ARMENIAN COMMUNITY OF SYRIA IN 1946-1971

